ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ընդհանուր ջանքերով զարգացնել զբոսաշրջության հարաբերությունները և համագործակցությունը երկու երկրների միջև,

հաշվի առնելով զբոսաշրջության կարևորությունը որպես բարեկամական հարաբերություններն ամրապնդող գործոն երկու երկրների ժողովուրդների միջև,

արտահայտելով ընդհանուր հետաքրքրություն զբոսաշրջության բնագավառում իրենց համագործակցության համար համապատասխան և երկարատև իրավական դաշտ ստեղծելու ուղղությամբ՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան,

ղեկավարվելով Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության և միջազգային ճամփորդությունների սկզբունքներով և հանձնարարականներով, ըստ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոնֆերանսի եզրափակիչ փաստաթղթերի և համաձայն Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության հանձնարարականի,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց երկրների գործող օրենսդրությանն և կանոնակարգերին համապատասխան, կաջակցեն զբոսաշրջության բնագավառում զարգացմանը փոխշահավետության և իրավահավասարության հիմունքներով:

Հոդված 2

Կողմերը համաձայն են կատարել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ աջակցելու և զարգացնելու զբոսաշրջիկների փոխանակում երկու երկրների միջև և խրախուսելու երրորդ երկրներից զբոսաշրջիկների ճամփորդությանը:

Կողմերը ակտիվորեն կաջակցեն զբոսաշրջության ոլորտը կառավարող պետական մարմինների, զբոսաշրջային ընկերությունների, զբոսաշրջային ասոցիացիաների, հյուրանոցային ցանցերի միջև հարաբերությունների հաստատմանը և

կիրականացնեն այլ գործողություններ՝ դյուրացնելու երկու երկրների միջև զբոսաշրջիկների փոխանակումը:

Հոդված 3

Կողմերը կձգտեն դյուրացնել մաքսային և այլ ընթացակարգերը երկու երկրների միջև զբոսաշրջության փոխանակման ասպարեզում՝ հաշվի առնելով իրենց երկրների օրենսդրությունը և կանոնակարգերը:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն զբոսաշրջության բնագավառում տեղեկության և տվյալների փոխանակմանը՝ կապված զբոսաշրջության վերաբերյալ օրենսդրական, ենթաօրենսդրական, վիճակագրական փաստաթղթերի, ուսումնական ծրագրերի, մարդկային ռեսուրսների մասնագիտական ուսուցման, զբոսաշրջության զարգացման ուսումնասիրման և հետազոտման համար:

Փոխադարձ հիմունքներով՝ Կողմերը կփոխանակեն զբոսաշրջության ոլորտի մասնագետներ՝ Կողմերի զբոսաշրջության ինֆրակառուցվածքին և զբոսաշրջության բնագավառի գործունեությանը ծանոթացնելու նպատակով:

Հոդված 5

Կողմերը կդյուրացնեն զբոսաշրջությանը աջակցող նյութերի փոխանակումը և կխրախուսեն զբոսաշրջային ընկերություններին և գործակալություններին՝ մասնակցելու զբոսաշրջությանը վերաբերող միջոցառումներին: Գովազդային և վավերագրական նյութերը, ինչպես նաև զբոսաշրջության ցուցահանդեսների համար առանց առևտրական արժեքի նախատեսված նյութերը կազատվեն մաքսավճարներից:

Սակայն եթե նման նյութերը վաճառվեն, ներմուծվող /ընդունող/ երկրում, ապա կկիրառվեն համապատասխան երկրի մաքսային կանոնակարգերը և հարկերը:

Հոդված 6

Երկու Կողմերը կձգտեն միջոցներ ձեռնարկել՝ իրենց հնարավորությունների սահմաններում ապահովելու զբոսաշրջության ոլորտի աշխատողների մասնագիտական ուսուցումը, կխրախուսեն փորձագետների և լրագրողների փոխանակումը, կնպաստեն երկու

երկրների միջև հետազոտական կազմակերպությունների բազմակողմանի կապերին և համատեղ գործունեությանը:

Հոդված 7

Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն զբոսաշրջության բնագավառում համագործակցությանը և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծերի ներդրման վերաբերյալ տեղեկության փոխանակմանը, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը: Կողմերը կաջակցեն զբոսաշրջության ոլորտում տեխնիկական օգնության ապահովմանը հյուրանոցային, հասարակական սննդի և հյուրընկալման կազմակերպման հարցերում:

Կողմերը կդյուրացնեն զբոսաշրջային ընկերությունների և միությունների, մասնագետների և գործարար անձանց հանդիպումների կազմակերպումը, յուրաքանչյուր Կողմ հնարավորություն կունենա ներկայացնել տեղեկություն, վիճակագրություն, փաստաթղթեր և ներդրումային ծրագրեր:

Հոդված 8

Կողմերի ազգային զբոսաշրջության ղեկավար մարմինները կհամակարգեն իրենց գործունեությունը Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) և այլ միջազգային զբոսաշրջության կազմակերպությունների շրջանակներում:

Հոդված 9

Կողմերը կարող են միմյանց տարածքներում բացել իրենց զբոսաշրջության պաշտոնական գրասենյակները: Գրասենյակի հիմնումը և նրա գործունեությունը կհամաձայնեցվեն Կողմերի պետական իշխանությունների հետ և կենթարկվեն Կողմերի ազգային օրենսդրությանը:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների կատարումը Կողմերը հանձնարարում են իրենց երկրների զբոսաշրջության ոլորտը կառավարող պետական մարմիններին:

Հոդված 11

Համաձայնագրի դրույթների կատարումն ապահովելու նպատակով կստեղծվի Համատեղ հանձնաժողով, որը բաղկացած կլինի երկու երկրների ներկայացուցիչներից:

Համատեղ հանձնաժողովը կգումարվի երկու տարին մեկ անգամ, հաջորդաբար երկու երկրներում՝ զբոսաշրջության բնագավառում երկկողմանի հարաբերությունների և համագործակցության զարգացման ու հետագա շրջանի հիմնական ուղղությունների հաստատման նպատակով:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ենթակա է Կողմերի օրենսդիր մարմինների հաստատմանը և ուժի մեջ կմտնի համապատասխան իրավական ընթացակարգերի կատարման մասին միմյանց վերջին ծանուցման պահից:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա հինգ տարվա ընթացքում և կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս հինգ տարի ժամկետով, եթե Կողմերից մեկը Համաձայնագրի ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ գրավոր չծանուցի դրա դադարեցման իր մտադրության մասին:

Համաձայնագրի չեղյալ հայտարարումը, այնուամենայնիվ, չի անդրադառնա սույն Համաձայնագրի գործելու ժամանակաշրջանում ընդունված ծրագրերի և նախագծերի իրագործման վրա, եթե Կողմերը չեն համաձայնել այլ կերպ:

Կատարված է Երևանում 1996 թվականի մարտի 25-ին, երկու բնօրինակով, հայերեն, ռումիներեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի նոյեմբերի 16-ից: